

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկը

«ԱԳԲԱ Լիզինգ» Վկ ՓԲԸ կողմից տրամադրվող սպառողական լիզինգի համար տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը սպառողի վարկավորման ընդհանուր ծախսն է՝ արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում,

A - տրամադրվող վարկի պայմանագրային գումարն է,

n - սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող միջնորդավճարի) հերթական համարն է,

N - վարկի մարմանն (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է՝ ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո պարտավորությունները համարվում են մարված,

K_n - սպառողի կողմից վարկի ստացման պահին և(կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ n -րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ),

D_n - այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրվանից մինչ վարկի գումարի հերթական՝ n -րդ օրը ներառյալ: